

ՆԻՍՏ ՈՒ ԿԱՅ ԽՈՅԵՑԻՈՅ

(Հայրադ գիւղի բարբառով) *.

ԳԼՈՒԽ Ա.

ԴԱՇՏԱՅԵՐՆ ԱՇԽԱՏՈՆՔ ԵԲ ՄԱՅՐՈԿՈՐՆ ԿՈՐՈՎԱԼԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔ

Կաթնովէն ես ըստշպտրի ** պտնը—կարծը քյետնի էթոս
էր չատանաս էր— Խատի ունձն ինցիր էր, պտմկյաների, պախէզ-
քանրի ¹ քախանա տիւս էր էկախ, էքալստարի ալաղն ² տնելիւ,
մէօվերի ³ քյէօնըշիվը ⁵ տալու վոխտը խասիր էր, աշնան ցանքսի
վորերի թիւնդ վոխտն էր. մասթ չկար, որ պտնը—կարծ
չիւնենար. հորմէկյը ⁴ մէ պտնի էր կյանցին Առատվան կարմիր
տրէվտ տէլ հոլտ նօր էր ճողճղվի, որ խէրը—աղայ, մէր—ախ-
չիկ, խարսնը—կյսիւր, քախւր—ախազէր խօսկ մէկօ տրուկ, ծեռ ծեռի
տվուկ, մէ ծէնի, մէ խօսկի. ջան ասելով ջան լսելով, մէյմէկյիւ
ջան զուրբան տալով—քյէօմողը տնելով թէ տան, թէ տըսի
պտներէն հորմէյն իւր *** զորտին տառչ էր տըսի, իւր խազը—

*) Հայթաղցիք զաղթել են Պարսկաստանից. Ուրմիոյ քաղաքի հեր-
տապատ դիւղից Պասկեւիչի 4825—27 Թուականների արշաւանքին Աւ-
մենիր այդ սովորութիւններն ու լեզուն, որ ժողովուրդը բերելով իր նետ
պահել է ցայսօր եւ անհիտ կորչելու համար՝ իր բոլոր դարձուածներով
մանրամասնօրէն զրի առանք, որպէսովի մեր այդ ժողովրդական «Նիստ ու
կաց» բագմարովանդակ սովորութիւններով մեծածալ ժողովածուն ժամա-
նակի ընթացրում գուցէ ուսումնասիրութեան մի նշանաւոր նիւթ
կը դառնայ բանասէքների եւ Հայ մատենագրութեան համար, ուստի որպէս
մի նմուշ տպում ենք առ այժմ դաշտային աշխատանքների սակաւէկ
մասը միայն։

**) Գլխիվայր ընկած ա-երը հնչել արաբական «չ» (ային) տառի
հնչիւնով։ Խոկ ընդգծուած ա-երը «աւ» երկրարբառի հնչիւնով։

0) Էօ-ով սկսուող վերջաւորող կամ բառամիջում հանդիպող երկրար-
բառը պէտք է հնչել ֆրանսերէն,, ևս « երկրարբառի հնչիւնով։

Խօրատառ շ-երը որոնց սակա հանդիպում ենք գ, կ եւ ք տա-
ռերից յետոյ որպէս յ չեն հնչուում, այլ միմիայն յիշեալ տառերի հնչիւնը
փափկացնելու համար են ծառայում։

***) Խ-ով սկսող, վերջաւորող կամ բառամիջում հանդիպող երկ-
րարբառը պէտք է հնչել ֆրանսերէն,, և « տառի հնչիւնով։

4) Սեխաստան. 2) Այդու միջի խոտերի քաղեկը. 5) Վազի աւե-
լորդ սատերը, ըստ Արարատեցոց՝ ոռամատ. 4) Կւրաքանչիւրը,

Ծան, Հեղ.

ասազն ասելով, ախշատես էր. Բայհիւլն էլ պոխը ծեսին դնդնաւով իւրէնց կալի մէջը քցած կառնայն էր կաելի, որ կալը տորտինար, քայլութի իւրմար տեղ պտուիէր:

Ամուսուան էկաւ, առաերը խասան ընձըլվը էն կանչելի:

Էնձի էնէնց գուռ վտիսան ի որ, փետէ մասթէ էն շինելի պտնցիւցես էն: Վիր առաը որ խասիր էր, ընձըլվը օրօիսկեց քաղելիւ կյերընդի քայչօղ եօն ախպէրտ՝ գօ¹ կայնաւ առաի կլօխա խարաքարով կյերընդին սրեց, եօնը պոցեց՝ խաղը—տաղ ասելով ունձի տնելի: խուրց կապողա՝ կաշիցէ կօյնոցա տեմէն կապուկ՝ կյերընդի ընձած, թոփած ծարտ² բանոքիով ժողվելի: խուրց ի կապելի, տէղ ի տընելի: ճուռ³ շինողա՝ շէլքայրէն⁴ ևս զարա⁰ ցէօրէօնքյերէն քյէօքըրխան ի որի, տէղի խով տեղը նստուկ՝ խուրց կապողի խմար ճուռ ի էօլրելի: ճանգըռից քայչօղն էլ խուրց կապողի խուրց եաւաչ եաւաչ թէվերն էրկյընցիւցելով—կարճացիւցելով՝ էրկյընը պտրուկը խաղը—տաղ ասելով բանօքու պերնէն որդած քյիւլոյերն էր ժողվելի:

Կնթըների պտներէն էլ՝ Զըմբիւթո իւրական պտներն էր տնել տալի, մէ քյետնի վտուելց ախչիքչերի, խարմների, կնթըների օրօիսկիր էր իւրէնց պտմբակատ քախանելիւ: թէ տոնք, թէ իւրիշ քախանչիների՝ խարս ինտն⁵ տալվ⁰⁰, մէր ինտն ախչիկ, կազ կազի արփուկ, քախան տնելով՝ պտրայ ծէնով քախցը նանայ էն էր ասելի:

Քախան կանեմ նուրարով, նանայ, նանայ, նանայ.

Դոլման կէպեմ բիբարով, սոնամ նանայ, նանայ:

Թոքուջտկիս խլաւ ա⁶, նանայ ...

Գօ պէրէս էն փլաւ ա, սոնամ, ...

Թոքուջտկիս կօր կօթո. նանայ ...

Գօ պէրէս էն կօրկօտո. սոնամ նանայ ...

Թոքուջտկիս իրանի, նանայ ...

Ինդի զյոլեր ծիրանի. սոնամ նանայ ...

Թոքուջտկիս մինտյի, նանայ ...

Ինդի զյոլեր ծիւնայի. սոնամ նանայ:

Թէ նաըը լաւ է.—Քախան կոնեմ էտ խողին, նանայ ...

Ղուրբան տիրոչ խօր կողին, սոնամ. ...

Թէ նաըը վատ է.—Քախան կոնեմ էտ խողին, նանայ ...

Քեոյնեմ տիրոչ խօր կողին. սոնամ նանայ ելն:

Քախցը էր քախանչիների նանայի ծէներտ, որ զատամանց⁷ էլ քամին տարը պեր տնելով պերես էր, մասթու հոււտան էր իկառի, էլ լուլով չէր կշանալի: Իլլահիմ, որ բախչաների, էքչի-

4) Անաւանիկ. 2) Գերանդու ննծուածքը. 5) Խուրճի կապ. 4) Որոմն.

0) Պարթամ. 5) ու. ⁰⁰⁾ Քոյր առն. 6) Ուրազի բերնի սորը. 7) Հեռուից.

ների կշտէն ըսնելիւն՝ խոզոր տեսակ, լուրիւն լուրիւն ծէներ ի լսելին Տող¹ էլ կնթըներոտ իւրենց սաւը² տղների³ խմար ծառաբէն լանդիկէ էն կապի, էն խով, չոհիր—ջմոն ստրուտների, սողորտիաների մէջո քայիւն էն արի, լայլայ էն ասելի:

Լայլայ ասողքայրէն Զմրիթո՞ իւր լաճուն վերցիր էր կանոցիր էր իւրենց բախչոն, էն կանանչ սողրտիատի խով ծառերի տակա՝ Ակօյին քայիւն էր արի, լայլայ էր ասելի —

Լայլայ ասեմ քայիւնտ տանի, ձամրիսեմ էթոս խէրանցա,
Չար կամարտ ճիւրը տանի,
Պորի խորտր խասկընաս:
Լանդիկէ էմ կապի ծառի ճօղերէն,
Ասկ—էրամիտ իմաս տաս:
Քամին թօ փչի սարի խովերէն,
Էօրէօր բալաս՝ լայլայ տնի,
Ծասկոց էմ տրի էքյիւ մէօվերէն,
Չար կամարտ ճիւրը տանի:
Տասկիր էմ քեզի իւրփոնգ թօռերէն,
Քեօ մօր կաթը հալալ ի,
Լայլայ ասեմ տղիզ տիւ քյնես,
Կէ, կշացի նոր քյնի,
Մրբես զըլիւլ զըլիւլ քյրհնես,
Հոլբո՞թ խօ մէ օր կասեմ:
Քյընի, բալաս, շոտ ճաշանաս,
Էտ իմ կաթնըտու մէրն ի:
Չարը, պտրին խասկընաս,
Էօրէօր բալաս, են:

Տէտ ըսնես էս՝ Ասկյորբէնց էքյիւ մէջէն էլ մէ իւրիշ լուրիւն լայլայի ծէն էս լսելին Տող էլ Դոստէն էր իւր լաճու էօրէօրօցը վերցիր, պերիր էր էքյին, ճիրանի ծառերի տակա կարօյին քայիւն էր արի, էօրէօրօցը էօվոլէօվ ասես էր.

— Իմ Խնջօյին քայիւն իւնի,
Փիտուոէ պորցեր իւնի.
Արծըթէ զըլիւլ իւնի,
Սևկիյէ պալիս իւնի.
Սոգոմիէ կամար իւնի,
Ինգէօզէ լիւլիկէ⁴ իւնի,
Վըսկանէ էօրէօրան իւնի:
Չորիսով քյոշուուկ ճաղերն ի,
Շիբրմանուց սուրափ լուծ քյոշուուկ,
Ճաներն էլ մէնէն կախուուկ.
Արփչումէ խութկուռն ի⁵,
Տակն էլ պիւրթ թողլոն⁶ արուուկ,
Փիտուոէ պորցեր իւնի.
Ալ զանաւուզ լըխէփ տրուկ,
Իւլզիւղի չիթ շօրերն ի,
Ալ մոյնմուռվ բոնդերն ի,
Ղանաւուզ քյէօրտն տրուկ,
Սեթնջիւր ճոճի⁷ շօրն ի,
Օրօնիկը վրոն կարուկ.
Քընի, պտրով ճաշանաս,
Չարը, պտրին խասկնաս,
Լայլայ, Խնջօս լայլայ տնի,
Չար կամարտ ճիւրը տանի:

Տէտ ըսնես էս էն թէխտ, էլլ գօ էտէնց. Ազադի Խանըմա Նիկօյին լանդիկէն խանիր ի շօրերը խագուցիր ի, պուխկերով թոստգյը արիրի կլոխա՝ խաղցուցելով, թոցուցելով ասելի.

1) Այստեղ. 2) Նորածին. 5) Խոյեցիր երկու սեռի զաւակներին (արու և էդ) տղայ են ասում։ 4) Օրօրօներում եղած երեխաների միզելու խողովակը. 3) Երեխայի տակի դօշակ. 6) Նորից պատրաստած կլոր, մէջը ծակ, որի միջից անցնում է միզախողովակ. 7) Թաթաշոր։

—Մէ լաճ իւնեմ օղերով,
Խարս կը պերեմ քօղերով,
Նոնոն կըլու խընկերով,
Բարան կըլու փնջերով:

—Հա դան դանի դոն չիւնենքյ,
Թիւրքյի խեալ պոն չիւնենքյ,
Թիւրքյն իկառլիւն քարով տանք,
Խայն իկալիւն պորով տանք:

Մողբիւղէնց էքյիւ մէշէն էլ եւոյի ծէնն էր իկառլի, որ իւր
ախչեան քանէն խանիր էր՝ թոցուցելով ասես էր

—Օխի դոնի դոն դոն,
Ասկիյէն զյինդոն,
Իմ գուտգախն վիրը տամ,
Բաքաւորի լածուն տամ:

—Հա զընգի, զընգի զընգան
Նոնոյի բալայ սըկստան,
Քյեռին էկաւ պոկյոտ,

Մարինասն էլ Խօջօյենց խարսայ, իւրենց էքյիւ մէշտ իւր
ախչեան խազցուցելով, թոցուցելով ասես էր.

—Տոշ, տոշ, փընպըղի տոշ,
Նոնոյի ախչիկ տոճկան,
Թէվերը կշտի անի պոն,

Գէօղոլն էլ իւրենց էքյիւ մէշտ իւր Թէօրէօղին թոցուցելով
էտէնց էր ասելի.

—Հա արնդ տընզի տընդոզն ի,
Նոնոյի մերզի կողոզն ի,
Պոնն ինչ տնեմ՝ աիզատ ի,
Պոմբուկը չար կտատ ի,
Աւելի ծէրտ ծաղիք ի,

Վարիլ Մողբիսէնց Խոթիւնու իւր լածուն լանդիկէն խանեց,
աըսաւ որ տակը տոճիր էր, ասաց.

—Բնիր էս, քրհնիր էս, նոնոն քյե դուրբան,
Քեռքիր էս, մըսաըսիր էս, կրնդա քյե տանի ևլու

Զանըմ, ես վո՞րը մէյն ասեմ՝ զոյգոներն ասելիւ ծէն չիւնեմ
որ ծէնօվ ասեմ ծեր տիւրն իկյոտ, ամա մաոթու խոքին վառաւօրուես
էր, մէ թուիւր էր ըլելի, էտ վոխտերբյին կեղականի սո-
վորութիւն մայիլ ըլելիւ պոն ի՝ մէ թըլսէն ընձըվարբյերի խաղը—
տաղի ծէներտ, մէ թըլսէն՝ էտ կնթըների էօրէօրօցի, լանդիկի ինոն
աղներին խազցուցելիւ, թոցուցելիւ մեղիթիների տեսայ տեսակ

—Հա դոն դոնի դոնդոնի,
Կապան կարեմ չտնդոնի.
Թէօրտն տնեմ պոց մաւի,
Նոնոն քեօ չարը տանի:
Լաճիկ լաճիկ, քարէ խոչչիկ,
Ա՛ռ քեօ ճաներ, քյելի խաղայ,
Ալիւրը մաղեմ
Իկյում քյե պախեմ:

Աէվ պտուկը չլոկու,
պտոյն ինդյաւ կատովաւ,
Սըկոտիկյոտ կտովաւ:
—Ախչիկ, ախչիկ չան պօլօժիկ,
Ա՛ռ քեօ խրծիկ քյելի խաղայ,
Ալիւրը մաղեմ,
Իկյում քյե թաղեմ:

Խաց չկյի տանի կախոտոն,
Տընդ, տընդ—տընդ Աչօ ջան:

Խաւու ուստ թաղիք ի,
Դըմրան պերէք, որ թիւնքյ,
Ծաման պերէք, որ ծամննք,
Տընիստ տըտիկ տնենքյ,
Էտ տղային թամաշայ տնենքյ:

զոյդոներոտ, առնու խէսն էլ՝ բըլրիւլի, սըվրջուղի * ծէներա, իլլահի մէօվի ճնջուղները, որ էտ մէօվէն էն մէօվո, էտ թըմրէն էն թումրա թանելով, պաշերքաներոտ վեր վեր թալելով ճլվըլաս էն էր, մառթու խանեսէն էր էն կենքց՝ խորին փառաւարուես էր, մայիլ էր ըլելի էտ լուիւն լուիւն ծէներոտ, որ չէ հըմմէն խառնիյվես էն էր մէյմէկիւ խէտ, Ասգած վկայ ի՛ ինչ ի հա, մառթ հէնց իմանաս էր՝ գո հոնիւղ՝ էտ է՛ն Ետեմի արտիստն ի, ինչ որ Աստմեւոյի ոռերին տվին՝ մէշէն պէճին ¹ տիւտ:

Դր թօլ ի որ մեր Բարբ—դոյայի թռանաներն տնենք, «Թռանայ ոնողի կլոխը կիւկյո», Էտէնց կյիրելիւ պոներ շատ շատ կան՝ հոլ մէ առոնանք թէիս մեր Վոքյիլ Սարքյիսէնցոտ, տըմնանք դոնք ² իշխո էն, ինչ էն տնելի:

Տորմէն մղայդոմ ³ տոտչ ասինքյ, որ առտերը խասիր էն: Ծնձվորի էնէնց զրոզուն վոխտն ի, որ փէտի վրոն շար էն փաթիթիլի, փէտէ մառթ էն չինելի՝ պոնցիւցես էն: Աարակի ⁴ մէկետ ասասը փոնարաթ ⁵ էր տորցիւ Վոքյիլ Սարքյիստ տսաւ, որ սարակ ծեռ չինելի, վերցեց իւր ախպէրքաներին, գո կյոնցին մասն իւրենց աստի մէչո՝ քաղես էն:—Եօն ախպէրտ Ազադն էր՝ կյէրընզի էր քյոշելի. Մուրօն խուրց կապողն էր՝ բանողիով ⁶ ժողվես էր խուրց էր կապելի. Խուրց վերցողն էլ Բոյհիւլն էր՝ վերցես էր տէզ էր անելի. Օհանէստ ճանգորիլյ էր քյոշելի. Վոքյիլ Սարքյիսն էլ նստիր էր տեղի տակա ճուռ էր էօլրելի (էտ էլ տկի ⁷ ասենք), որ ընչիւր դոր ⁸ էօլրած ճուռ չէր, խուրցը խուրց չէր րլի): Տոնք ⁹ իւրենց կրոխքաները կախած խաղը տաղ ասելով առար քաղես էն էր, մէյն էլ ըշկացին ինչ՝ գո տաշտըլզի նաշտալզի խացերոտ պերես են. Բոյհիւլը աշկերը չարս որեց՝ տրեց՝ տրսաւ որ, գո Նորդիզն էլ՝ դոսթըլանը չկին կապուկ, մէ սինի փլաւ էլ կլիմին արուեկ իկեռլի, ջանը ռձիլ՝ ինդյաւ, մէկը իւզեց որ տառչ էթոյ, մէյն էլ՝ ախպէրքերէն ամչըցաւ, տեղէն իյար չկապաւ. ամա Վոքյիլ Սարքյիսի աշկն տյեռը էր՝ Բոյհիւլի սերաը չկառելիւ խմար ասեց.

—Բոյհիւլի, Բոյհիւլ խարսն էկաւ. խացը պերեց, տոտչ քել խացը ծեռէն առ թո խարսուն զոյհմաթ չըլի:

Բոյհիւլի իւզազն էլ հէնց կօ ¹⁰ էտ էր. թէ էրկու առ իւնէր, էրկուոն էլ փախ ասաւ, տըռձկոլ տնելով էկաւ թէիս Նորդիզու, ցէօրնի աստը փէշքյուչ ասեց Նորդիզիզն էլ տորը մէ

^{*)} Աարեակի

1) Արտաքսել. 2) Նորա. 3) Փորքինչ. 4) Մշակի. 5) Վազոց արդէն անգործածելի է այդ դրամի անունը. որ երեխն շատ հին վրուի ծերերն էին կրկնում՝ երը իրենց անցեալից առ ու ծափքի առարկութիւններ էին լինում: 6) Կեռ փայտ, որով ճաւարում են գերանդու ճրեցուածը. 7) պէտը է. 8) Նորա. 9) Սորա. 10) Ահա, ահաւասիկ.

ինձօր բոխչեց¹. սաէփ Բոյհիւլը փլաւի սինին Նորգյղէն առաւտրեց իւր կլիսի վրան, Նորգյղի խէտը քախցր քախցր զետլոցի տնելով էկան փլաւը տրին տէզի խովա ախպէրքյերով ժողնրվան զլդօրակ² նստան հալալ խացի. Նորգյղն էլ քամայն տրեց թէիս տոնցու՝ նստաւ տէզի տակա ընչիւր տոնց խաց ուտելքակրտ:

Վար³ մառթու սարակ-սարվարի պատիւ-հիւրմոթը դուռի գորոնք փլաւ էն օղօրկելիի. ամը էն, ինչ որ ախկատ մառթընի, աներքերէն մէ փորթովիւզյ⁴ էնէնց կապուտ, թօղգղան թանտ էն օղօրկելիի, որ պախս օրերին էլ ուտես՝ էլը Ասուած մերկէ չի համարիր Պախսն էլ՝ եա վար, եա ախկատ խաւասրական ի. կերագքյերու եա փորիվինոց ի, եա կանանչ, քալ տլիւչոյով էփած զյոնդլոց ի, որ բազի—բիր էլ ուտեսիլիւ վոխատը սիստար էն խամնելի խստու՝ էնէնց խամնդնալի որ, քյոնց շնորցիւ ոզիր բօզբաշէն ազէկէ ի ըլելիւ

Կլի որ շնորցին զյոնդլոցի պատիւր չիմանա, ամա խոյեցիւ խմար, խօսոյքյերի մէջու հրմմէն կլօխա զյոնդլուն ի. տոր խմար էլ մէյմէկցիւ հա կասեն. — «Խոյեցիւ ազիզ թքյոն զյոնդլուն ի». Խոյեա քյէ օչին գոր սերմու զահնաս, ինչ իժրարով էն պերին Փորիվինուն էլ էր գրիւսան ասած՝ խոյեցիւ խօսոյցու, որ տիյ⁵ զյոնդլոցի խէտը մէ աեղ խոյեցիւ անընով իշուար, ամը ինչ տրած՝ էրէ վանցիներու փոնդ էկան՝ փորիվինոյի սերմա խափլութէնով խոյեցիների ծեսերէն շընթին, անունն էլ փախին տրին «դանդուռ», որ խոյեցին պան չը փոյհմի, չըճաշնայ. չիւնքի խոյեցիներու ընչիւկէ էն վոխատ տէլ հոլու միամիտ զամի էն էր, էրէվանցիների գովլոցյիւթէնին ծանօթ չին էր. ամը խոյեցիւ աշկը ոյտր էր՝ խէտ տասաւ, տլբըհոլու ճանչցաւ, մէ ազէկէ էլ անուն կպուց, ասաց.

— «Դօն արի, դօն արի դօնեցի,

Գյոնդլոյ ուտաող խոյեցի.

Դանգուռ ուտաող էրէվանցի»:

Դորմէն էսթէխ, ընչիւր մկայ էլ էրէվանցիներին ասել էն՝

«Էրէվանցոց դանդուռ կասեն».

Մկայ ինչխօ դանդուռի խամր էրէվանցին ի զինուլի. էնէնց էլ էտ օխնըլած զյոնդլոցի խամը մէնակ խոյեցին զյինոց:

(1) Այդ սովորութիւնը մինչեւ այժմ էլ Թագաւորում է զիւզական կեանքում, որ երբ արտի տէրը բարեհանում է ճաց անելու կամ իւր բանուորներին այցելու, խործ կապող բանուորը իր կապած խրճիրից (նոյնպէս անում են եւ բաղնան անող կանայք իրենց բաղնանած բոյսերից) մէկը վերցնում եւ իւր ուսին բարձած տանում է նոյիրում իր տիրոջ, որից մի քանի կոպէկ ընծայ ստանալով, կրկին վերադառնում է ու շարունակում իւր գործը:

2) Կլորակ. 3) Աւնեւոր. 4) Բզազ. 5) Պէտք է.

ԳԼՈՒԽ Բ.

Կ Ա Լ Ե Խ Կ Ա Ր Ֆ Ա Դ Ր Ա Խ Ռ Ի Խ Ե Ն Ե .

Վարթըզօրի ճառաք չէօքը զօնելիք, տէրտէրքյերտ կալերն օխնիր էն էր, մարհներն էլ իւրենց քետոէշա, լոմիտու, հոլ, հաշա, ճանգոփիկց, ջուջոռ, կամ, կամատէն, լուծ, սամի, սամաթեռ հողրած կալերի մէջը՝ պոնեսէն, էն ճառաք չէօքյին, որ կետինա ծիւ տնես էր՝ կէփեր, վարդիլ Սորբյան իւր ախալէրքյերով, բուզիրիր էլ խարաներէն՝ իւրէնց վաժի զէլօրտ, նորմէկյոտ մէ պտն էնէր տնէլի. ճընջըսթան շեօքյոտ տոնցն էնէնց էր ճիսի, որ քուտինքյոտ ճատկըներքյերէն էնես էր ընչիւյ ստերի ճաներտու Փափախու. որիսըլըդ տանս վրոն չեսէր ասնայ՝ մէնակ մէ շապիյ—թումբան ի. էն էլ շատի լաշը պոցը պոց էրեվաս էր: Տրկյասքաների օղլըշազներն էլ թոփիրէն էր աշանի երզը—կաղէն ցող էն էր տնելի, վարը՝ սըլտայ ցող տաշաի ստույի խմար, որ մէջը խաց անեն ուտեն. վարն էլ կաթատամ զոմբլոյ կյարծելիւ՝ փողցըներտ¹⁾ զըրթը—զըրը թոփիւլիւ խըմար:

Սրէվու կայնաւ, չէօքը զօնեց. կալվարքյերտ կամթող որին կնոցին նստան՝ վորը մարքի, վորն էլ իւրենց չիւմբարքյերի խովազինջանաս էն էր, մէյն էլ տսան զօ տնեն կեօսօրվան դանի խացը—խօսուցը պերին՝ Գյիւհոր նոտնոտն էլ իտեանց քըռքյետշ քըռքյետչ իկյոլի. աղները խետ տսան՝ ուրախացան, թէխ մը թըխամանց ծէն արդին.

— Ետ'նոտ, էտ ինչ էս էփի պերի:

— ... Ար տիւքը իմանաք ինչ ի....

— Իմացանք, իմացանք,—սարի աւելիւկց ի:

— Զիմացաք. էնէնց կիրակուլ էմ էփի, որ մեռեն ուտի կը յորի ... մատերքյերտ խէտը կուտէքյա

— Տղներ, կլի որ էրէվանցիների կեռղցածն ի ճա. ասին մէյմէկյուիւ:

Զէ, չէ, էլը չը զցղաք:

Բ'էտ ինչ ի, որ չես ասելի, մեր պառուը քցցիր է:

— Ծեր պապկայ տզիզ թըրքյոն ի, կիրէքյ թո զուզումքյերտ տեղն իկյա, վըսկուքյերտ պնդանայ:

— Բը ը ը յ, զյոնզլոյ ի, զյոնզլոյ, ասին տղներտ, ստէփ կուտուտվան, պիւլիւլիկց նստան, մէ ճռչ զօդ էլ արին մէշտեղոտ, զյոնզլոյն լցին մէշտ մէ պինդ էլ փրթին՝ ստէփ էնէնց լոզզոթին բշտահով կիրան որ՝ իշխօ շնորցին ապուր խմի:

կեօսօրվան որէվու խէտ որ շոճքաւ, կամը, ջոռջտոքյերտ

1) Աղբանոցները:

լծին՝ իշխո տուշարվորի խաղը—տաղերն էր, որ բռխչաների, էքչիների, պախէզքյերի, պամկաների ինոն առաերի մէջէն էր արևս իկեմլի. Հնէնց էլ կալերի մէջէն՝ խոզոր տեսակ խաղը—տաղերի ծէն էր արևս իկյալի: Խլահի ժաժիկյ ուտոզ Աղնավուզիներինո, մէ անքամ տսիր էմ Տիգ կվոյի լաճուն, որ մէ ջուխտ եղ կամ էր լծի հորմէ ծնութ մէ եղան վրան տրուկ, կրօխն էլ՝ թռլ թռլ էսթէլս, էնթէլս տանել պերելով ասես էր.—Այ ել, ախպէր ջան, հա ել, կամ տրո ջէյրան, քիւլաշը տորմոն տրո հէյրան, տակն էլ ցէօրէօն տրո՞ ել հա ել ախպէր ջան ել . . . Դէն! ընցամ էն մէկէլ կալն էլ՝ ձըզ նոզորո մէ ջուխտ էշ լծիր էր կամին խէտն էլ քախցր ծէնով ասես էր.

—Այ ել, այել, ա ել, ել, մոմո՞տ կծեմ չօ՛ բալաս, խոյեան ըլաւ, այել ել, ել ելն:

*

**

Կալէ—կտէ խէտ պոծան, վարքյիլ Սարքյիստ ախպէրքյերին կանչեց, ասաց.

—Աղադ, Մուրօ, Դորիր, Բազուլ Բոյհլիւլ տիւքը չապօվէքյ՝ թէ կալէ պրծանք էլ պտնը-կործ չիւնենքյ, ամը մեր կործի տժոր, թիւնթ վախտա տէլ հոլո դէսան ետ ի 2:—կանօխ, խէտ որ ահպըներէտ կլէքյ՝ Վորթոնը (իր որդին) թո էթը էքչին պախելիւ, խռոտերը ալաղի, ճրի, պախի—չախի՝ տիյ մնայ զող ընչիւկյ էքչրստարի քաղելոտ, Դորիրն ինան նոզորո թո էթան պախէզո զըսա մըսային, տուկուլայներէն աղէյ մղեմթ ըլէն, որ խոտրդքյերո չը կաղնան, Աղադն ինոն Մուրօն թո էթոն ճոզոչը պտնցիւցելիւ՝ նօրաթչիներին եօլը տանէն, որ մէյմէկիւ եախայէ ծուռո չը ժողվեն. Բոյհլիւլ արւն էլ կըտ էթաս պոմբուկետ, ճրի վտխախն իւշ պախէս, գյոնոյէն, մաշէն ինոն կօտօչ մաշէն մուզրետթ ըլէն, որ չը չոթէն, խասնելիւն խարսներին խմացում կոնես՝ կյիկյոն կըքաղէն. կըլի որ էն կօտօչ մաշերո մեղիկյ շատ հարկաւոր ըլէն, չիւնքի բարան ասելի մտկյիս արիրեն՝ թի որ Տէրը զինքը տճօղի Վորթոնին էտ իկյացոզ աշնանա տիյ փակեմ, ասել չկայ, մառթ հոմմոշտ տիյ իւր հաղարը³ պախի, կօ էտ ըլաւ իմ թոմբէնո, էլ չեմ ասի, փառք Աստու հմմընով էլ կատարելի մասթ էքյ, զինաքյ՝ որ մեր պանը մենքը չտնինքյ իւրիշը ըսկի չի ոնի: Մկան էլ ասել չիւզի, առատունը տեղըքյերէտ շնտ կըլէքյ կէթոքյ թէի ծեր պտնին հան:

Բոյհլիւլը սուսը-փուս կայնած ոնզըքյերը կախիր էր էտ ապսպրայներին տնզյոճ էր անելի. խէտ որ տաւ իւր պտնն ըմբընէն չոթին ըլաւ, տժորն էկաւ՝ քիշ մնաց որ փարը պատավէր, վիրցեց ասաց.

1) Այստեղից.

2) Սրանից յետոյ է.

3) Կախապատրասութիւն.

—Եաւաշ ապէր, էտ ընչի՛ Վարթոն, տիւ քաել էքախն. Բողոք
Դարիք, տիւքա էլ քաելքա պախէզոտ. էն մէկելներն էլ հոլ թո մնան,
ամը խէտ որ խասար ընձի՛ պտմբտկյո թաւչուրմիշ որիք. ընչի՛,
ևս քէօէօյի պիճն էմ, որ դանց հըմերն էլ գինջ, տճողում տեղ
ապսպիք, ընձի՛ տժորու ի՞շ կըլի, որ մէ օր էլ ընձիկց մէ գինջ,
անդալ, անզալմըզալ պտնը կօրծի տեղ անհա, հասանդ տեղ օրօխ-
կես. նո՞քի խանէքա թուէքա չէօլ բիարանքաերտ. խօ ևս խօրթը
միւրիկց չեմ, որ վարտէ խասնես էքա՝ հորոտդոն—բորոտդոն ընձի՛
էքա բույուրմիշ տնելի: Ես քաեմնի կլիսանի էմ որ էտ ամբավան
դըթրաւին⁰ մենակս պտմբտկց ձրեմ, էն էլ՝ Հայթազա տաշտի
մէշտ, որ ճրի սովի ի, մէօրոյի² կլօխս մէ պտխւռի ի կայնելի, հոր-
դոմ բիք իկնուշն ճրին խափ էն տալի՛ զը մկը տիւ եսոր մէնակս
ճիւր որտ. այ, առնցը տսէքա, առնց խափին ըշեացէքա է ... եանի
ինչ ասեմ որ, քանի տիր էլ ասիր էմ՝ «մառթ շին ըլի, տան
փատից շիւ»:

—Ես քառնի տիր ասիր էմ քաեզի՝ պտնին շատ չեն զուացա-
շատ զինա՞ս, քաիչ զուացայ, տան վասափիցը ախւ ես՝ վու էթո, չ-
թո՝ էլը տնկց ախրին ախց տիւ էթու՝ խօ էլօղին չէթոյ:

Բոյնիւլը սրսկվաւ, ձէնը կուց, ասաց.—Բո՞լի, քանի խօսին իւ
Ասատունը, էն կլիսէն Վարթոնը կյնոցիք էր էքախն, մաիր էր
բանանուրի³ մէշտ ալազ էր տնելի, մէօվերի քէօնըշին էր զոր-
կելի, մէօրվոշույքաերտ⁴ զտատտ զտատտ էր տնելի, խուրց էր կա-
պելի՝ ստէփ ատանես էր խիազանի ես մշնակի մէշը տնելի. մէյմէկը
էլ՝ շատ խանուկ խաւազքանրին վարտմիւրդ էր տնելի, ամա ըսկէի
մէկէն էլ մէ զարլու չէր ուտելի, չինքի՝ քանի որ խաւազը չէ
օլմնրզի՝ ընչիւր Ասվարածին պահս ի՝ զորէն ետ ուտես էն Շի-
րան, ոլիւչոն տանձն ինոն ինձարտ, կամիր ինոն սըվտակց զիլազը
խօ, լիյն էր. Ասառ մէ խոքին զանըզվս էր էտ արվան էքայւ մէշտ,
մէ խօսկով, Վարթոնու, խօսկս չկուրսեմ. Մուրօյի Ամբաթի խօտը
սորզէտ սորզէտ ինզաիրէն էր անմըհական տրտխատ. ինչ որ սըր-
տերքաերն իւզես էր ոլըրսանթին զանըզվս էր, օրական մէ՝ յը էր-
կու ճրիրմիյ զտմ պտնիսեն էր եան չէ, ծնոաց իւրենցը թոլեսէն
էր էն արվան ալվան ծառերի տակա չիմոնքայերի վրտն էրկաէն էր-
կաէն պարզվեսէն էր ոինջանսակէն էր էլը ըլեսէն էր ինեսէն էր
խէխան ծառը ծօղերի ջանին իւրենց սրտի իւրածքաերէն պինզը-պիլոր,
կուշտը-կուռ, մէ բօլը-բօլդան ուտեսէն էր:

Դորիքն ինոն Բողոքն էլ կյնոցին պախէզոտ, տասն որ ծախ-
կիք ի, զսա—մոան էլ էրվալի, Բողոքու թըմբանըրդ ինզաւ պա-
խէզի մէշտ վոզվրզաւ՝ վեր վեր թանելով ասաց. «Բունի զէօրոտ
զոայ սալը⁵, Ստէփ էկան չալամիզուան, Բողոքը քօլայի խմար

1) Ո՞չ թէ. 2) Կրաշա. 3) Մարկի. 5) Թումբեր. 4) Որթի սո-
տեր. 5) Անխապանների այդ սովորութիւնը դրեթէ այժմ վերացած է.

չիմ էր կոնկի տաս էր Ղարիբին՝ Էն էլ պատ էր անելի, Յօլայէն խէտ որ պածան, մէ ճռչ փոս քակին Ալգաւայի խմար, ևողերո պատ տրին, կեանէն մէ պծառ պտնցըցիւցին. թողո ճիւր լսվելիւ, խինը ափւա ըլմիւ. խմար էլ՝ մէյմէկիւ թիւշիւնի էրկու ծակ թողին, որ խմելիւ խմար մշտական պազ ճիւրն ըլիւ.

Աղազն ինտն Մուրօն էլ մոփր էն էր ճողչի մէջտ մէյմէկիյու խետ թօզ զուլ տալսվ հօլայ էն էր էթոլիւ Մէ քէկը ճողչի քարը ըիդոն կայնաւ, տոնք էրկառվ էլ թռան տիւստ տասանինչ որ, կո սաւաջազա ճիւրը տարիր ի, վոխան էլ՝ ինչ ասեմ, էնէնց մթնըրեռ ըրշեր ի, որ մատ խօթէս մասթու աչկ՝ չի տըսնայ, էրկրառվ էլ տրին որ նաւի կյլիէն թռնէն էր, Աղազի առը պածաւ՝ թրամմի, ինզյաւ ճոտունա, Մուրօն մատ էր՝ զժիկի պէս ետ ատոցաւ իւրը թոլեց թէի ցած Աղազի ճնաէն պոնեց խանեց, ամա ըլիր էր իշխօ հոնիւզ¹ որ կասէն՝ ճազչի մուկ կո էտ էր՝ չորերը տոճրվուկ, իրես - միրեստ լօխալըված, կաւը - քոռառ թողոնդոն էկան սաւաշազը կախն, ատոցան էկան ճողոչտ, թիւնդիրը վուսին նատան շորերը չոացուցին պոծան Մուրօն վերցեց ասաց:

—Բալամ, իշխօ կասեն՝ «Եզրը տոտի ծին ուտի», միլը մերն իւ. —քէկը - ցերէկյ մննքյ տոտ հա տլըպանք, մեր թեների միան ուտենքյ, ք'իշխօ, խալիսի ոլըրքերո ծուտր տնենքյ, խորիներքյերս ներկենքյ, աչխատանք տնենքյ, Ղարթանը տանիւ տա կինիւ, տրտղի՝ պերի հստի էրցիւ խով տեղերա՝ ուտի, խմի, քշնի տնի. եաւաշ բ'էտ վոր Ասլածա կը վերցի, որ մեյն վերցենքյ՝ հո՞ն:

—Շատ էլ Ասուած չի վերցի, ինչ զինունք, անելա. ինզիւրենքյ տիյ քահուչենքյ էլի, ընչիւց որ ըշկանք տոր իտին ախորա ինչ ի կըսելի ... զաթի ասեն չասեն՝ Վարթանտ մկաւուստան իւրը կուրսիր ի, ըշկանք հոլը կանօս մէկել զոր ախրա իշխօ կըլի:

—Տոյն ջոյնում՝ իշխօ կլի՝ կլի, ասաց Մուրօն, տիւ հոլ մէ տո՛ր սալըզը տու, որ զորը տրիր էն էն անմըհական տրտիստ էրիւ մէջը իւերինչ չի, մէ սայմիշ էլ չեն տնելի, որ անէն մէ կտօր խաց պերէն մեղիկյ:

—Տօ հոլը էտ մի տսա. տսա տանանք, եարար, մեյն որ էտէնց չիւրիւմիչ էնքյ ըլելի տող հա՝ կանօսի - մէկէլ՝ ծօյնըվնիւն միլը էտ եւտոյի տանհջանքա մէշտեղ կպերեն, եօխատ տիյ դոդումոյնըրը-մի թողնէն, զրկեն. ամը ...

—Էլ ինչ ամա, Վայու զիինտ զրկել զահոցտ, ոը վերը Ասված, կետինքյտ մասթ չը կայ. բէսարմադ մի ել, «զրկյեօզը կը զրկյիի»:

Տսւնանք խորտր տանք Բոյնլիւէն:

Ճրի սիրոն խասիր էր Բոյնլիւէն՝ պտխը տրիր էր թեր

4) ձշմարիան.

վրոն մէ սար մնացիր էր պոմբուկյոյ. մէյն էլ Օղուր-բորոն ճրի բոնդո, վրոն էլ հալ—հորորդով չեր մնացի, ճրնըվեր էթու իկեռլով՝ ծնէս ստէ ինզայր էր էջրդաւ. էլ չը կշնոց ճրնըվեր, մնաց պոմկի մէջո. նստաւ որ մէ աղձառ զինջանար, տսաւ որ ճիւրը պորոյցաւ էլ էրկու մէօրան չի լցելի, կուեց որեց մէ մէօրոյէն էն էլ անջաղ ծնծընալով երբմիշ էր ըլելի: Անզյոն չորեց. նստաւ որ մէ ալազլամա խաց ուտէր, մէյն էլ ըշիաց որ էն մէ սղաւ ճիւրն էլ կտոււաւ՝ մէօրան մնաց կիսատ, տսաւ որ պոմկի ճիւրն ինչաւ քչերվանայ քյոլովիչոն խառնիյվաւ. կիւսնակն էլ որ կլոխը խանեց Բոյհլիւլը լափ շշկըռաւ. խաց ուտելու վրոն կուրսրվաւ. Քախցածութէնս Բոյհլիւլին ախտիր էր զյուկօրվես էր, կլօխը գևմըոփր էր. սաղ օրա տէլ մէ գան էր խաց կաերի՝ էն էլ նայտալըզին. խեխճի փարը քախցածութէնէն նըլիկյ նըլիկյ² էր կանչելի. աշկերի սեն էթոս էր սըլտոյն իկյու էր Մզրըրա կաետինը կախեց՝ ճիւրը պոմկի վրոյէն լափ կտովաւ. Բոյհլիւլը մնաց շիվարած, զուդումը կտոված, թաղաթէ ինչյաւ, պտխը ծէոփն գոյեազ տալով, տվբոթալով, խօսկս չկուրսես՝ մըզոյիկյ էլ չէօլէօփիկյ³ էր, թըմիքնէն պոնած ընչիւյ խընիք⁴ րիւզմոն առձվուեկյ պոմկէն տիւս ըլաւ՝ կյնոց թէխ Օղուր-բորոն ճիւր կապելիւ:

Պոմկի մէջն որ տիւս ըլաւ, հորմէ քյէօլու մէ ջոնսուոր էր տոսցի Բոյհլիւլի աշկին, հէնց իմանաս էր որ, կօ հա՛ վարտէ որայի իւրը փարալամիշ կոննեն: Խէլոյն տեղ առուն պոնած էթաս էր, մէյն էլ աշկն ինչյաւ առվի մէջո, տսաւ որ գո մէյն իւր լմանին կայնիրի առվի մէջա, թոնզը թիւլցաւ, վայ ամման տսաց, վըր վասին պղըզաւ, առուի մէջինն էլ խէտը պղըզաւ՝ էլ չէրեաց, նոր տող խողոր պոնի խիյալ որեց, ելլահի որ իւրէնց ճաղչի «մեղը-մէն աղէյքյերո» ըսկի մտէն չեն էր էթոլի. իւր մտկի խէտը շատ տվեց առաւ, զիյն իւրա սիրտ տվեց ըլաւ կայնաւ, լընդուտա-լով մէ խէլոյն տեղ էլ կյնոց, մէյն էլ տսաւ որ, զո իւերենց զառ-նոյի ճողչի թէխէն մէկյու մզմըզալով թէխ իւրն ի իկյուլի. Բոյհ-լիւլի թիւքը պերնի մէջը չօրցաւ. Ղարանթուն էկաւ. — էկաւ. մոտացաւ, Բոյհլիւլին տսաց.

—Պարիրկնեն քյեկի, Բոյհլիւլ:

—Վայ, Սստու պորին ... ընդեր Օհանէս տիւ Ես ... լոէր ըլի, տիւ էտ վոխտին զա՞ր էս իկյուլի:

—Ծեր զյոնոյի ճողչէն:

—Հայ անաշէն, իշխօ էս սիրտ որի, որ էտ մթանա մտիր էս էն չարքերի պօնու:

1) Մի փոքր. 2) Քիչ դառն բոյս է, որ զործ են ածում փորացաւի բայց աւելի շատ նիք եղած ժամանակ. 3) Թոյլ, անուշաղիր, անհող: 4) Արխալուղ:

— Ի՞նչ չարք, ի՞նչ պո՞ն, դող զմատ գոր էք, որ ասել էս անմաշնն, Գօ ի՞նդյարքյերով ժողնը վիր էնքա ճողչի մէջո՞ւ էնէնց շը՝ խեկացուցելով քաէփ էնքա տնելի որ, էլ չեմնու ասել, ամը մեղի, մեր աշկին հոլը ըսկի մէ զատ չի էրվացի, մկը տիւ իւր էս սութ ասելի որ . . . էտ էլ զյինո՞ս իշխօ ըլաւ որ էկամ, ըլամ տիւստ՝ նուզափըլ աըսամ, որ տիւ կօ իկալէս էր՝ ասիմ մկայ շատ քախցած կլէս, տոր իւրմար էլ էկամ քյեղի տանեմ, որ համ մէ կուշտը — կուլոր խաց ուտես, բորբջիտ¹ տակա պնդացուցես, համ էլ մէ տեղ քաէփ տնենքյ, զը ետ'ր, ետ'ր էթոնքյ, եօխսա՝ մըկայ ըլած չւած քարաբն էլ կուտեն կը պոցուցեն էլ քյեղի չի մնայ՝ չո՛տ որոտ, ետ'ր:

— Եաւաշ, բը ես ապօվիր իմ թռանայ էս տնելի . . . մխալէր, որ զրիւսն ասեմ՝ ես էն չարքյերի պանը չեմ մնի. որ իմ քշըսանքովը ոոկի էլ տաք՝ էլը ես էն տեղի քարաբը չեմ ուտի:

— Զաթի տիւ էտէնց խիյալբազ էս. քիս չողէն էլ էս զոյսենալի. յիւր մնաց չասքա, որ հո՛խը ն՛հախ կը վախենաս էլի . . . :

— Եաւաշ, ես չասեմ՝ տիւ ասա. մկայ տիւյն չէյնոտլի որ էտէնց ի՝ մեղմէն աղէյքյերոտ քշեր—ցերէյ դէն անպակաս էն:

— Մենքյ հըմմնէն էլ աղէկյ էնքա էլ մեղմէն աղէյքյերը վո՞րն ի, որ հա ասելես՝ է:

— Գյետ' էտ ինչասիր որ . . . Զեմոտլի ես էմ ծուռ, թէ տիւ.

— Բէտ ինչ էս քեղմէն տիւս հա բարելի. շիթիւրի շիթիւրի զուոցալա քեղմէչ նուրոտ էս որի, բը մեղմէն աղէկյը վորն ի:

— Այսպէր զը թօլի իմ խոքին պերէս իմ պերանն է, մեղայ Աստու էլ ինչ հա. ինչ էկաւ պերանս՝ տոտցաւ է, առ բէլո՛ Մեղմէն աղէյքյերոտ՝ սատանաներն էն, չարքերն էն, առ հոլը խրվիկյերն էլ էն՝ վո՞րն ի . . . մեղայ իմ Աստուն հա, զոռով շան անունքյեր ալինքյ տօ. Իսսաս Քիրիսառս, խոլէս, խոփանէս, չարը տանես պուրին պերէս:

Իսսաս Քիրիսառս ասելէն ետ, մէյն էլ ըշկաց որ Օհանէս չը կայ մէնակ զիյն ի, ծէն տրվեց՝ Օ՛հանէս, Օ՛հանէս ետ'ր, ետ'ր, իկյո՛սէմ, ջիր² մի որտ. կօ էկամ, էկամ, ծէն խան՝ էկամ . . . Զէ, աըսաւ որ էլ Օհանէս չը կայ, էն սհաթին փոյշմաւ, որ «մեղմէն աղէյքյերէն» էր, էս եօլին³ իւր կողը կուշտա մէյն էլ ըշկաց, աըսաւ որ չէ մատթը—մուռթ չկայ, զոյսիլխարաւ, ճանրախը շըշկըսաւ, կյախ ոորդէտ էր էթոլի կյախ տոտչ, ըսկսաւ վուկյել. ասկի իզը կուրսեց, ամա մէ ղժժոց իսէտ ինդյաւ տնզյոմտ՝ իշարցաւ⁴, քառառն տիր իրեսը խոչ խանեց. էլ իսսաս Քիրիսառս, էլ օին

1) Կուրքըիդ տակը. 2) Խոռվել. 3) Անկամին. 4) Զգաստանալ.

անըլվան տէր Մըշիւ Սուլթան սըփի կարապէտ, էլ զինաւոր սըփի կը է արքյա, էլ Դորոլտզինովո սըփի Խաչ, էլ Սմբան փրկիճ ինոն սըփի Նիշան շխողեց՝ զըմբընին էլ կանչեց իւր հիմդադին¹⁾, չէօրէյն կուշար կայնեցիւց, ասաւ որ ձամբախը կուրսիր իւ Գևմդոն զեժ ետ տառցաւ էկաւ օղուր բարտն զցդաւ, ճիւրը լափի կոփի էն էր, պիլից որեց իւրենց առուն, ասաց—Հայ զցինի խան հա, խում կաթն ըրկներին ըսկի էյնաիրար չի մնացի, տնզախորին²⁾ էկափի ճիւրս կոփի իւ ընձ էլ իւզելիր տանէր խօսկով տնէր, որ իմ պոմբուկը մնար կիսասա, իւրը՝ ճրիկը, էն հէնց իմացաւ ես կը խափվեմ. ախա՝ թէ ափւ աղուեկն էս, ես էլ պա՛ն էմ, մկը յիւր էս ընձի խափելի... էտէնց ասելով իկառ էր՝ խասաւ Ղանլու չիմոնին, մէ զժժոցի ծէն էլ տող ինցաւ տնդշտնտ. հէնց իմացաւ իւրը կանչես էն, քյոնի էկաւ տնդըրծի զժժոցը աստեց³⁾ ծէնը փախվաւ թիւթագի, դմբոցի, չշրջօցի ծէնիւ: Բոյնիւլը կլօփը կախած իկառ էր, մէյն էլ ըշկաց որ, զա մէ թօփուն քյէփ տնելով թէս իւրն էն իկառի. հէնց իմացաւ որ Օհանէսի ասածն ի՞ զիյն էլ երմիչ ըլաւ էկաւ թիւշ ատնս մէջը՝ կայնաւ, տըսաւ որ, մէկաը թիւթագի փչելի, մէկաը դմբոցի թիւթելի, մէ քյոնիսը չափ էն դորկյելի, չվշրգացուցիս էն, մնացազբանը էլ ճիկաւ ճիկափի պանուկ՝ եղոյի էն խազագալի: Բոյնիւլը էկաւ—էկաւ զյլէօրվելով ինդյեաւ տոնց «եղնազի»: մէշտ. էլ մոջու չալին որ երմիչ ըլէր, մէշերքանը էն տիւս երէր, ոլբրհուր չարքէօլիոքյ որին՝ քացին իւրենց պիւլիւլիքի մէշտ խազցուցելով հա տարան: Բոյնիւլը իւր քախցածութենտ մտէն քացիր էր էլ դոնցը նօրաթ չէր տալի, իւրմէն ափւս խազալով էնքան շուռ՝ էր էկի որ, քրտինքյու վրոյէն սելափի պէս թուփես էր ցածր Բոյնիւլը խաղալով շատ էր շուռ էկիի՝ թէ քիչ, մէյն էլ արսաւ որ, կօ մննես էն իւրենց զյետնոյի ճողովչտ. էն անաթին «մեզըմէն աղէյքանը» միւսն ինդյան. իրեւը խաչ խանեց, ասաց.

— Կայնէքյ, առ կմայնէքյ... «Ըստան Քիրիստոս»... մէյն էլ ըշկաց, որ մասթ չըկա մէնակ զիյն ի կայնուկ՝ մազերը բիլ բիզ ըլաւ, ջանը տաքրպաղ որեց՝ իշխօ մէ սափար տայն ճիւր յրձէն մասթու կլսին. տնզամքերը զժզըժացն ինզյաւ. սիրաը զմզրիաց. կլսի խուփը պանցրցաւ՝ ցածացաւ. ծեսերը թիւլցաւ, ստերի զուդուր լափի կատովաւ տողպոտացը ինցյաւ. աշկերի տէմը սէվիւն տըփեց, մէշերը թիւլցաւ, շեռը տվեց վրան. կլօփը պատօպավաւ, բիրդան՝ զրօնմի, ինդյաւ ճողչի տանս մէշտ էրկէն էրկյէն պարզվաւ, նօր էս մեսի Բոյնիւլ՝ յը կանօս՝ էլ վրոն խորոր չլաւ: Ընչիւյ լաւ էնէնց մնաց, լսին Բոյնիւլ չըլաւ, մէ կրակ ըլաւ.— Ինաւորած վողնես էր էսթէ էնթէ. աշկերէն կրակը՝ պաց էր թոփելի. վիրը որ տանաս էր վողնես էր վրոն՝ սրտպատառ էր տնելի: Տոր վրոն պոնին՝ զինջիլքյերով կատկըլին:

Դրաօար Յարութիւն Աւէնեան

1) Օգնութեան. 2) Վերջ ի վերջոյ 3) Սաստկացաւ. 4) Նըշէլ.